Հաշվետվություն

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կողմից 2025 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի փաստաթղթաշրջանառության բաժնում իրականացվել է ընդամենը 34630 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 12415 մտից, 7913 ելից, 14304 ներքին:

2025 թվականի ընթացքում ստացվել է 776 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 593 քաղաքացի: 561 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 32-ինը՝ մերժվել է:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 16 քաղաքացի, բոլոր 16 դիմումներին պատասխանվել է:

գ/ Առողջապահական բնույթի 28 դիմում է ստացվել, 27 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 1-ինը՝ մերժվել է:

դ/ Աշխատանքի հարցերով դիմել է 47 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է 34 քաղաքացի, ստացված 34 դիմումներին տրվել է դրական պատասխան:

զ/ Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 6 քաղաքացի և ստացել են դրական պատասխան:

է/ Հողաշինության հարցերով դիմել է 5 քաղաքացի:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 14 քաղաքացի և ստացել դրական պատասխան: